№ 276 ԿԻՐԱԿԻ, 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1917
ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ, 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 276

[illegible]
Ռուսաստան—40 ր.,
Ամսական — 4 ր.
Առանձին համարներ
Մեր հասցէն՝ Тифлисъ, „Мшакъ"
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են՝ Կովկասում իւրաքանչիւր տողատեղին 40—30 կոպ., Կովկասից դուրս՝ 60—40 կոպ.։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել թղթին հասցէն և թէ 1 րուբլի։

„Мшакъ"
5. ПЕТРОГРАДЪ
Захарьевская, 10. Въ Контору
А. И. Манташевъ и К
А 409.

Բացված է բաժանորդագրութիւն

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
առաջիկայ 1918 թ. համար
(47-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է (պայմանական) 1918 Թ. համար՝

	Տարեկան	Կէս տարին	Ամսական
ՌՈՒՍԱՍՏԱՆ՝	40 ր.	22 ր.	4 ր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝	60 ր.	40 ր.	8 ր.

Տարեկան և կէս տարվայ բաժնեգինը մաս-մաս վճարել—ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ 1917 Թ. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

«Մշակի» գրասենեակը յատուկ խնդրում է հին բաժանորդներին 1918 թ. համար բաժանորդագրվելիս՝ փոխադրական բլանկի վրա կպցնել անպայման 1917 թ. տպագրված հին հասցէն իր վրա ունեցած համարով, որով դիւրութիւն տրված կը լինի գրասենեակի տեխնիքական գործավարութեանը։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պէտք է վճարել՝ Կովկասում—առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 40 կ., վերջին երեսի վրա 30 կոպէկ։ Կովկասից դուրս՝ I երեսի վրա 60 կ., վերջին երեսի վրա 40 կոպէկ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 1 րուբլի։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ. Редакція газеты „МШАКЪ".
Արտասահմանից՝ TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՆԱՒ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։

Հայ Զինւորական Խորհուրդ

Պահանջվում են հայոց զինւորական մասերի համար՝ զինւորական աստիճանաւորներ, գործավարներ, տեխնիկներ, գրագիրներ, շոֆֆէրներ, երկաթուղ. ծառայողներ, ֆելդշերներ, հեռագրական ծառայողներ և այլն։
Հասցէն՝ Սբաս-Աբաղսկայա հրապար. № 7, առ. ժամը 10-ից մինչև ցեր. ժ. 2 ը։
առ. (օ. մ.) 1523 3—2

ԱՌԵՒՏՐԱ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ
ԹԻՖԼԻՍԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Անդրկովկասեան Առևտրա Արդիւնաբերական առաջին համագումարի որոշումը իրագործելու համար՝ առաջարկում է Թիֆլիսի Առևտրա-Արդիւնաբերական դասակարգին իր գործերի համար չը դիմել ԼԻԿՎԻԴԱՑԻՈՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ, որ հիմնված է Թիֆլիսի Քաղ. Վարչութեան կից, որովհետև յանձնաժողովի կանոնադրութիւնը հրատարակված է Քաղաքային Դումայի կողմից՝ խախտելով ժամանակաւոր կառավարութեան կողմից հաստատված Քաղաք. Կանոնադրութեան 16-րդ, 63-րդ և 108-րդ յօդւածները։
Լիկվիդացիոն Յանձնաժողովի կանոնադրութիւնը [illegible] կատարելու դէպքում հարկ անհրաժեշտ է իսկոյն դիմել Առևտրա Արդիւնաբերական Պատգամաւորների Խորհրդին՝ բողոքելու Քաղաքային Վարչութեան գործողութեան դէմ համաձայն Քաղ. Կանոնադրութեան 141-րդ և 142-րդ յօդւածների։
առ. 1526 2—2

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարաբեան
Վերադառնալով հանքային ջրերից, վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։ Կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ։ Ընդունելութիւնը ամեն օր ցերեկվայ ժամը $1\frac{1}{2}$—$3\frac{1}{2}$-ը։
Սոլոլակ, Ռտիշչևսկայա փող. № 1.
Հեռախոս 6—80.
առ. (հ. ու. կ.) 1342 50—20

ԲԺԻՇԿ
Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։ Հիւանդների համար անհրաժեշտ անալիզները կատարվում են ՋՐԻԱՊԷՍ։
Ընդունելութիւնը եր. ժ. 5—7
Հասցէ՝ Вознесенск. ул. № 8.
առ. 1314 100—44

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունելութիւն վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւններ ունեցողներին ամեն օր, բացի կիրակի օրերից ժամը 12—2 ը, կանանց համար՝ ժամը 2—3-ը ցերեկվայ։
Հասցէն՝ Սոլոլակ, Բէբուտովսկայա փող. № 33. Հեռախոս 11—75.
առ. (հ. կ.) 1395 100—15

ԲԺԻՇԿ
ԱՆՏԻՕԽ
Ներքին հիւանդութիւններ, նաև ականջի, կոկորդի, քթի, և աչքի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը ամեն օր առ. ժ. 11—12-ը և 6—7-ը երեկոյեան։
ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՁՐԻ
Բէբուտովսկայա փողոց № 26.
առ. 1286 50—47

ԲԺԻՇԿ
Ս. Ց. ԵՐԻՑԵԱՆ
Ընդունում է վեներական, միզասեռական և մորթու հիւ.։ Բուժում սիֆիլիսի 914-ով և 606-ով, սեռական խանգարման—էլեկտրականութեամբ և այլ միջոցներով։
Ընդունելութիւնը երեկ. ժ. 5—8-ը, բացի կիրակի օրերից։
Ելիզավէտինսկայա փ. № 52, երկրորդ յարկ։
առ. 1259 100—53

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ականջի, քթի և կոկորդի հիւ.
Ամեն օր, բացի կիրակի
Առաւօտ. 11—1 ժ., երեկ. 6—7 ժ.
Հիւանդների թիւը սահմանափակված է։
Бебутовская ул. 26., երրորդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
(հ. հ. կ.) առ. 1238, 50—33

ԱՆԱՐՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մշտական (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) [illegible] գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկներ
Ա. Ա. Ցարումբինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Հ. Ա. Զակրժեվսկի
Ա. Ր. Ֆիշեր
Ա. Գ. Տանպարոնեանց
հ. կ.) առ. 78. 100—99

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՄՃԵԱՆ
[illegible] լնդերքի բժշկ., արհեստ. ատամներ, կարօնկաներ ոսկուց և պլատինից, ոսկեայ կամուրջներ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. ամեն օր, բացի կիրակի օրերից առ. 10—1 ժ., երեկ. 4—7 ժ.։
Лермонтовская ул., № 1 մուտքը պէրեւլոկից։
(հ. հ. կ.) առ. 1036 0—60

ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ

Այսօր «Մշակի» 1917 թւի վերջին համարն է լոյս տեսնում.

Այս տարի, փոխանակ 292 համարի, որ տալիս էինք ամեն տարի, մենք կարողացանք տալ միայն 276 համար, շնորհիւ գործադուլների և զանազան աննպաստ պայմանների։

Ծանր էր լրագրի [illegible] 1917 [illegible] ված պայմաններ և [illegible] հանգամանքներ զգացին հրատարակութիւնը չափազանց մեծ ծախքերի մէջ. և թէև 1917 թ. ընթացքում բաժանորդագրութիւնը և հատավաճառութիւնը աւելի աջող էր, քան 1916 թւին, այնու ամենայնիւ ծախքը չափազանց եղաւ և դեֆիցիտը խոշոր։

Չը նայելով այդ հանգամանքին, մենք չը յուսահատվեցինք և ամեն ջանք գործ դրինք՝ չը դադարեցնել «Մշակը» և ապահովել նրա հրատարակութիւնը 1918 թւի և յետագայ տարիների համար։

Այդ միջոցներից մինն էլ եղաւ որոշումը՝ աւելացնել «Մշակի» բաժանորդագինը 1918 թ. համար դարձնելով 40 ր., ինչպէս արել են և միւս լրագիրները։ Պէտք է ասենք, որ 40 ր. էլ չէ ապահովում հրատարակութիւնը, որովհետև եթէ ի նկատի ունենանք թղթի թանգութիւնը, մենք ամեն մի բաժանորդի համար միայն թղթի փողը պէտք է վճարենք 40 ր., մինչ կան ուրիշ՝ դեռ աւելի մեծ ծախքեր. [illegible] տական բաժանորդների և համակրողների վրա, որ նրանք յանձն կառնեն այդ զոհողութիւնը, եթէ 40 ր. համարեն զոհողութիւն, և միջոց կը տան խմբագրութեան՝ շարունակել «Մշակի» հրատարակութիւնը։

Վերջին օրերի դէպքերը, մանաւանդ երկաթուղագծերի և երթևեկութեան դադարումը կասեցրել են բաժանորդագրութեան հոսանքը և դժուարացրել բաժանորդագրութիւնը, բայց մենք յոյս ունենք, որ երթևեկութիւնը կանոնաւորվելուց յետոյ մեր բաժանորդները կը շտապեն բաժանորդագրվել։

1918 թ. ընթացքում «Մշակը» կը հրատարակվի խմբագրական ուժեղացված կազմով, համագործակցութեամբ Հայ Ժողովրդական Կուսակցութեան կենտր. վարչութեան։ Այդ մասին մենք կը հաղորդենք առանձին։

Ներկայ 1917 տարին աղէտալի եղաւ բովանդակ հայութեան համար։ Սակայն նոյնիսկ ծանր աղէտները չը կարողացան և չը պէտք է ճնշեն մեր ոգին և եռանդը։ Եւ նոյնիսկ աղէտի մէջ մենք պէտք է եռանդով, տոկունութեամբ շարունակենք թէ մեր ազգային և հասարակական գործը և թէ մեր պարտականութիւնները, առանց յուսահատվելու։

Հ. Ա.

[illegible] ՆՈՐ

Ամերիկայում հրատարակվող «դաշնակցական» թերթերը, գլխաւորապէս «Հայրենիք» թերթը, նոյն իսկ ներկայ րոպէին, երբ հայութիւնը ենթարկված է սոսկալի աղէտների, չեն դադարեցնում կուսակցական պայքարը և շարունակ յարձակվում են «Մշակի» և նրա խմբագրի դէմ. Ի նկատի ունենալով այդ թերթերում գրողների անձնաւորութիւնները, ըստ մեծի մասին անյայտ և գրչակ, մենք մեր արժանապատւութիւնից ստոր էինք համարում պատասխանել նրանց խուլիգանական յարձակումներին։

Սակայն մեզ առանձնապէս ցաւ պատճառեց, որ «Հայրենիք» թերթում հանդէս է եկել «Մշակի» և նրա խմբագրի դէմ մի դաշնակցական, որ ոչ գրչակ է և ոչ խուլիգան, այլ գրող և գործիչ. Դա Մ. Վարանդեանն է, որին մենք համարել ենք միշտ իբրև կոռեկտ մարդ և աւելի հաւասարակշռվածը բոլոր դաշնակցականների մէջ։ Եւ զարմանալի էր մեզ համար, որ նա, Մ. Վարանդեանը, նոյնպէս միացել է դաշնակցական գրչակներին և խուլիգաններին և նոյն իսկ այսպիսի տաղտկալից բոպէում հարկ է համարել Մեսրոպ եպիսկոպոսի [illegible] սանձարձակ, անվայելուչ և ստախօսական բիրտ ու գռեհիկ ոճերով։

Պատասխանել Մ. Վարանդեանին իր ոճով և լեզուով մենք չենք կամենում. Մենք միայն ասում ենք. կայ ազգայ պատմութիւն, կայ անաչառ հասարակական քննութիւն, որոնք, երբ կրքերը հանդարտվեն, կարտասանեն իրենց անկողմնակալ դատավճիռը և ցոյց կը տան՝ ով է մեղանից մեղաւորը, դաշնակցականնե՞րը թէ մենք, ինչ դեր է խաղացել Մեսրոպ եպիսկոպոսը Վորոնցովի ժամանակ, ինչ դեր է խաղացել նրա միջոցով Դաշնակցութիւնը, ով է եղել Թալէաթի, Էնվէրի բարեկամը, մե՞նք թէ Մ. Վարանդեանը և իր ընկերները։

Հայհոյանքը ցոյց է տալիս միայն մարդկանց անբարեկրթութիւնը, գռեհկութիւնը և այն, թէ Եւրոպան անգամ անզօր է ազնուացնել մարդկանց, որոնք ի բնէ անազնիւ և [illegible] են։

Հ. Ա.

ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ԱՂԷՏԱԼԻ ՍԽԱԼԸ

Վրաց ազգայնական հոսանքի բերան «Возрожденіе» թերթը տպել է իր № 209-ի մէջ մի առաջնորդող յօդւած, վերոյիշեալ վերնագրով, որ անկարելի է անպատասխան թողնել։

Առաջ ենք բերում յօդւածի թարգմանութիւնը։

Եւրոպական պատերազմի սկզբում, երբ դեռ Ռուսաստանը պատերազմական դրու[illegible] Թիւրքիայի հետ, հայ ժողովրդի պարագլուխները թոյլ տուին մի ճակատագրական սխալ։

Ենթարկվելով կոմս Վորոնցով-Դաշկովի և մինիստր Սազոնովի քաղցրահնչիւն ճառերի ու խոստումների ազդեցութեան, նրանք յայտարարեցին պատերազմ Թիւրքիային և հայ կամաւորները խուժեցին թիւրքական պետութեան սահմանները։

Մենք այն ժամանակ իսկ մի շարք յօդւածներով նախազգուշացրինք հայերին այդպիսի ռիսկոտ քայլից, ապացուցինք այդպիսի ագրէսիվ գործողութիւնների աղէտաւորութիւնը մի փոքրիկ ազգի համար, խորհուրդ տուինք լինել աւելի հեռատես, ջերմօրէն հանդէս եկանք ընդդէմ ազգայնական շովինիզմը բորբոքող պարագլուխների, բայց մեր խորհուրդները զուր անցան։ Մենք նրանց չը կարողացանք համոզել, այլ միայն գրգռեցինք մեզ դէմ և նոյն իսկ հայ լրագիրների մէջ ստացանք «հայակեր» անունը։

Մենք վիրաւորված էինք մեր ամենա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ

(Մի պատկեր պատերազմի արհաւիրքներից)

Խոր խաւար էր։ Ճանապարհի երկու կողմից բարձրանում էին ձիւնապատ հսկայ լեռներ։ Սառը քամին փչում էր շարունակ ու իր ոռնոցով սարսուռ ազդում ամայի տարածութեան մէջ։

Ոչ մի շնչաւոր արարած, ոչ մի ձայն, բացի քամու չարագուշակ վզզոցից։

Մի փոքր անց՝ խաւարը հետզհետէ տեղի էր տալիս լոյսին։ Արևի առաջին ճառագայթները մաքառում էին խաւարի դէմ։

Մենաւոր լռութեան մէջ լսվեց քայլերի ձայն։ Ո՞վ կարող էր լինել այդ պահին այդ ամայի տեղում։

Բայց ահա հետզհետէ նշմարվեցին երեք ստուերներ, որոնք քայլում էին անվստահ։ Արշալոյսի մէջ երևացին նրանք։ Երեք դժբաղդ էակներ էին նրանք՝ մի կին և երկու փոքրիկ երեխաներ։

Ասես աշխարհի բեռը նրանց շլինքին էր դրված, նրանք քայլում էին իրանց վերջին ճիգը լարելով. ասես աշխարհի դարդը նրանց գալուկ դէմքերի ու ցամաքած աչքերի վրա էր դրոշմված։ Ողորմելի ցնցոտիները ծածկում էին երեքի մերկ մարմինները, որոնց ազատ մասերը սևացել էին սարսափելի ցրտի ազդեցութիւնից։

Թէ ուր էին գնում այդ թշուառները, իրանք էլ չը գիտէին։ Միայն քայլում էին շատ յոգնած։ Երևում էր որ անցել էին երկար տարածութիւն։

Այդպէս էլ էր. կոտորածից ազատվածներ էին նրանք։ Գիւղում մարդ-գազանները մորթեցին շատ-շատերի թւում և Խաթունի (այդպէս էին անուանում այդ կնոջը) ամուսնուն, յափշտակեցին նրա խորտիկ Նազլիկին, իսկ ինքը ինչ-որ գաղտնի ուժով փրկվեց իր երկու բալիկներին ու ճամբայ ընկաւ. Թէ ուր, Աստուած գիտէ։ Ոչինչ չը կարողացաւ վերցնել չէն ու բոլ տնից։ Բայց իր մասին չէր մտածում Խաթունը։ Նրա ամբողջ հոգսը իր սիրասուն որբերին ազատելու մասին էր։ Բայց ինչպէս։ Այնպէս, ինչպէս ուրիշները արին. փախչել...

Փախչել զուլումի տեղից՝ թողնելով սիրելի վաթանը, փախչել՝ մինչև կընկնեն քաղցից ու յոգնածութիւնից, փախչել ահ բարբարոսների սրից։

Երկու ամբողջ օր քայլած էին նրանք, երկու օր Խաթունի սիրտը կտրատվում էր ու կսկծում Սէրգոյի և Նշանի աղերսագին խնդրերից։

— Մարէ, կտոր մը խաց, քաղցած ենք...

Որտեղից, սար ու ձորի մէջ, որտեղից ճարէր նա հաց նրանց համար։ Միակ կերակուրը ձիւնն էր, որի վրայով քայլում էին նրանք ոտաբոբիկ։

Արևի անխորժելի տաքութիւնն ընկաւ այդ երեք թշուառների վրա։ Բայց անզօր էին այլ ևս առաջ գնալ. քաղցն ու յոգնածութիւնը, վիշտն ու տառապանքը ընկճեցին նրանց թոյլ մարմինները։ Ու երեքով ընկան գետնին՝ ձեան վրա...

Եւ անձայն տարածութեան մէջ, ցրտի ճիրաններում, չար բաղդի այդ զոհերին տիրեց թմրութիւն, ասես մի քանի րոպէով չը զգալու համար իրանց անհուն զրկանքները։

Քամին շոյում էր նրանց կլասիկ մարմինները և մի տեսակ օրօր էր երգում երկու անմեղ երեխաներին...

Քամին գնալով սաստկացաւ ու մինչև ոսկորները հասնող ցուրտը ստիպեց Խաթունին ցատկել իր տեղից։ Նրա յոյսն էր ընկնել մօտակայ գիւղը կամ քաղաքը բարի մարդկանց մօտ, որպէս զի իր Սէրգոն ու Նշանը պատսպարվեն ու կերակրվեն։

Խաթունը ձայնեց.

— Զըղի ժըռնիմ, ելէք, ճամբայ ինկնենք նորէն...

Նրա թոյլ ձայնը իր արձագանքը գտաւ ամայի տարածութեան մէջ. բայց Սէրգոն և Նշանը լուռ էին։

Իր ձայնին աւելի ույժ տուեց Խաթունը ու ձեռքով էլ հրեց Սէրգոյի կողքը։

Սէրգոն չը զարթնեց։ Նրա աչքերի առաջ, որին մարդիկ Աստուած են կոչում, երկու անմեղ էակները հանգստանում էին յաւիտենական քնով, որը չը գիտէ աշխարհային որևէ տանջանք...

Վայրկենական ընդոստով ամեն ինչ հասկացաւ Խաթունը. ու անհուն մի ճիչ էր, որ թռաւ նրա ցաւագար կրծքից ու մի րոպէ թնդաց ամայի տարածութեան մէջ։

Նա բազկատարած՝ իր արդար բողոքը ուղղում էր դէպի երկինք...

Ցնցող ողբերգութեան մի պատկեր էր այդ՝ բնութեան գրկում, որի գործող անձը թշուառ փախստական Խաթունն էր, ծնկաչոք իր երկու բալիկների առաջ...

Իսկ քամին իր դաժան վզզոցով կատարում էր այդ ողբերգութեան յուշարարի դերը...

Ե.

Այսօր, կիրակի, դեկտեմբերի 31-ին
Արզար Աղեքսանդրեան ԱՆԱՆԵԱՆՑԻ
մահվան քառասունքեակին կը կատարվի հոգեհանգիստ Ջգրաշէնի ս. Աստուածածին եկեղեցում (Հայոց բազար), որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին այրի Սրբուհի Մարտիկեան Անանեանցը և եղբայր Միհրան Աղեքսանդրեան Անանեանցը ընտանիքով։ Պատարագի սկիզբն է առ. ժ. 10-ին, իսկ հոգեհանգիստը ցեր. 12-ին։
1533 1—1

Արտիստական Ընկերութեան Թատրոն
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Չորեքշաբթի, յունվարի 3-ին 1918 թ.
Կը ներկայացվի
ՄՕՐԻՍ ՄԵՏԵՐԼԻՆԿԻ
ՄՈՆՆԱ-ՎԱՆՆԱ
Դրամա 3 արար., թարգմ. Տ. Յովհաննիսեանի
Ներկայացման ամբողջ զուտ արդիւնքը զրվում է
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ
Ներկայացման վերջը երգեցիկ և երաժշտական խմբերը կը կատարեն
Հայկական ազգային հիմնը
իսկ Ար. ԱՀԱՐՈՆԵԱՆԸ կը խօսէ մոմենտի պահանջների մասին։
Սկիզբը ժամը ճիշդ 8-ին։
Տեղերի գները բարձրացված են
Ռեժիսեոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Օգնական ռեժիսեոր՝ Աւետեան
Խորհրդի հերթապահ անդամներ՝
Յ. ՔՈՉԿԵԱՆ, Ս. ԳԱԼՍՏԵԱՆ
Երկուշաբթի, յունվարի 8-ին, ԱՐՈՒՍ ՈՍԿԱՆԵԱՆԻ բենեֆիսին
«ՎԵՐԱ ՄԻՐՑՕՎԱ»
ՈՒՐՎԱՆՑԵՎԻ
տп. 1531 2—1

ՀՐԱԶԴԱՆ
Գրական-գեղարուեստական ժողովածու 1918 թ. Ա. գիրքը
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ և հետևեալ բովանդակութեամբ՝
Յովհ. Թումանեան՝ «Զօն», Դ. Դեմիրճեան՝ «Հին երգերից», Ծ. Թորգոմեան՝ «Առաջին ձիւն», Վ. Միրաքեան՝ «Սարի երգերից», Phenix՝ «Օրհնութիւն», Վահան Թոթովենց՝ «Լեզուր [illegible]», Արմ. Տիգրանեան՝ «Էլ քեզ չեմ կանչում», Գ. Բաղաշեան՝ «Մահվան հարսանիք» շարքից, Ստ. Զորեան՝ «Տէր Սօսին», Վարս. Աղասեան՝ «Հիր էի այսօր», Ազատ-Վշտունի՝ «Կարօտներ», Եղիշէ Չարենց՝ «Հեռացումի խօսքեր», Ռաֆ. Զարդարեան՝ «Աղօթք և մաճկալ», Վ. Ջիթունի՝ «[illegible]», Վէսպէր՝ «Ջրեր», Անուշ՝ «[illegible]», Ոստանիկ՝ «Սեղանիս վրա», Պահարէ՝ «Երազ», Հ. Սէտրաք՝ «Դէպի զաւան», Վիգան՝ «Կոյրը», Լեռ-Կամսար՝ «Շատ կարճ տողեր մը», Գիսակ «Շուշն ու ճանճերը»։
Իւրաքանչիւր համարի գինը 3 ռ.։ Խմբագրվում է Բ. գիրքը։ Խմբագրութեան հասցէն՝
Тифлисъ, Абасъ-Абадская ул. № 7. Ն. ԹՈՐԳՈՄԵԱՆ։
տп. (2·) 1532 2—1

սուրբ զգացմունքների մէջ, որովհետև մեր անկեղծութիւնը մեկնվում էր իբր թշնամութիւն, իսկ բարի ցանկութիւնները որակվում էին իբրև պրովոկացիա՝ ուղղված ամբողջ հայ ժողովրդի վերաբերմամբ։

Բայց պատմութիւնը ասաց իր խօսքը։

Ռուսաստանը շուտով յայտարարեց պատերազմ Թիւրքիային և մինիստր Սազոնովին հաճելի եղաւ Պետական Դումայի ամբիոնից հայերի անունով նոյնպէս յայտարարել պաշտօնապէս պատերազմ և ճանաչել նրանց իբրև դաշնակիցներ։

Դրանով նա վերջնականապէս սուր դանակ քաշեց հայ ժողովրդի վրա Թիւրքիայում, բայց այդ ամենը շողոքորթում էր հայ պարագլուխների ինքնասիրութիւնը և նրանք արդէն առաջաւոր յաղթութեամբ էին հրճվում։

Ինչպէս յայտնի է, Թիւրքաց Հայաստանը, շնորհիւ ռուսահայերի խելառ քաղաքականութեան, ջարդվեց և ոչնչացաւ։ Վորոնցովների խորամանկ քաղաքականութիւնը, թէ «Ռուսաստանին պէտք է Հայաստանը առանց հայերի», բոլորովին իրագործվեց։

Թշուառ հայերին կոտորում էին և քշում էին իրանց մայրենի օջախներից հերթով թէ թիւրքական և թէ ռուսական զօրքերը։

Ռուսական և թիւրքական զօրքերի մի շարք անվերջ առաջխաղացումներից և շարժումներից յետոյ ետ և առաջ հայկական գիւղերի միջով, Հայաստանը բոլորովին դատարկվեց հայերից և հայկական հարցը այդ միջոցով այժմ աւելի սուր և կրիտիքական կերպարանք է ստացել, քան թէ էր պատերազմից առաջ։

Հայութեան վերին մասերը ենթարկվեցին ցարական բիւրոկրատների սուր պրովոկացիային և իրանց կուրութեան մէջ չէին նկատում, թէ ինչպէս նրանց գործիք են դարձրել իրանց նենգամիտ մեքենայութիւններին։

Պատերազմական գործողութիւնների թատերաբեմ էին նաև Լեհաստանը, Լիտվան, Բելօրուսիան. կռիւներն այդտեղ սարսափելի էին, ոչ նման մեր կովկասեան պատերազմական գրոհներին, և սակայն թէ Լեհաստանը, թէ Լիտվան և թէ Բելօրուսիան ամբողջ մնացին։

Ուրեմն ինչու համար կորաւ Հայաստանը։

Ամենքի ընդհանուր խոստովանութեամբ, պատերազմողների մէջ ոչ ոք այնպէս ասպետօրէն կռիւ չէ մղում, ինչպէս թիւրքերը։ Եւ այնու ամենայնիւ Հայաստանը կորաւ, որովհետև արուեստական կերպով նա դրվել էր կառափնարանի ներքոյ։

Հայերը չը պատասխանեցին ոչ Ռուսաստանին, ոչ Գերմանիային. Նրանք, իբրև հպատակ ազգ, ոչ ոքին պատերազմ չը յայտարարեցին, մնացին խիստ լոյալ և, գիտակցելով իրանց անզօրութիւնը, պահպանեցին հնարաւոր չէզոքութիւն։

Նոյնպէս հպատակ փոքր Հայաստանը սկսեց վարել մեծ ազդեցիկ քաղաքականութիւն և մտաւ, իբրև զինուորական մեծ պետութիւն, դաշնակիցների շարքը։

Որքան մեզ յայտնի է, թիւրքահայերը բնաւ չէին ցանկանում պատասխանել իրանց հայրենիքին՝ Թիւրքիային և ցանկանում էին նոյնպէս պահպանել չէզոքութիւն, բայց ռուսահայերը կանխաւ շտապեցին ստորագրել նրանց տեղ իրանց պետութեան պատասխանատւութեան թղթին։

Երկար չը խօսենք այդ անխոհեմ քաղաքականութեան միջազգային հետևանքների մասին. ծանր է նորից պղպղել դեռ չսառողջացած վէրքերը։

Բայց երևում է, որ աղէտալի դասը նրանց չը սովորեցրեց ոչինչ։

Եւ մենք նորից պէտք է բարձրացնենք մեր ձայնը։

Կողմնակի՝ մեզ աւելի տեսանելի է։

Այսօր հայ պարագլուխները թոյլ են տալիս մի նոր աղէտալի սխալ։ Ռուսաստանը կնքում է հաշտութիւն Թիւրքիայի հետ։ Ռուսական զօրքերը մեկնել են ճակատից. Կովկասի բոլոր ազգերը ծարաւի են պատերազմի վախճանին։ Իսկ հայերը նորից կամենում են անկախօրէն պատերազմ մղել Թիւրքիայի դէմ։ Նրանք յայտարարել են զօրահաւաք և պատրաստվում են հանդէս գալ ի պաշտպանութիւն ռուս զօրքից լքված թիւրքական ֆրոնտի։

Փոխարէն աւարտվող ռուս-թիւրքական պատերազմի՝ սկսվում է հայ-թիւրքական պատերազմ։ Վորոնցովների և Սազոնովների դերը ծառայաբար վերցրել են իրանց վրա անգլիական դիպլոմատները, և հայերը նորից կանգնում են նոր աւանտիւրայի շաւղի վրա։

Լինենք անկեղծ։

Ինչի վրա յոյս կարող են դնել հայերը։ Անգլիացիների օգնութիւնը ցնորական է։ Նրանք միայն իրանց էգօիստական նպատակների համար կը շահագործեն հայերին և հէնց առաջին իրանց համար ձեռնտու դէպքում կը լքանեն նրանց բաղդի բերմունքին։

Գուցէ հայերը յոյս ունեն իրանց դրացիների օգնութեան վրայ։

Ռուսաստանի ժամեան ինքնակալ Լենինը քիչ է մտածում հայերի մասին, իսկ ռուս զինւորը մի ռուբլի համար այլևս չի համաձայնի նորից պատերազմ սկսել Հայաստանի փրկութեան կամ Ռուսաստանի մի որևէ այլ մասի համար։

Անհեթեթութիւն կը լինէր մտածել, որ Թիւրքիայի կամ նոյն իսկ քիւրդերի պատերազմի դէպքում օգնէին մեր երկրի թուրքերը, լեզգինները կամ վրացիները։ Պատճառները բազմազան են և յայտնի։ Վրաց դեմօկրատիան չէ ցանկանում պատերազմի շարունակութիւնը, ոչ մի աւանտիւրայի մէջ չի մտնի, մանաւանդ որ հայերը առաջ են քշել սահմանաբաժանման հարցը՝ այն նպատակով, որ պատառեն վրաց տէրրիտօրիայից նրա լաւագոյն, վաղեմի նահանգները, շարունակում են վարել վրացիների վերաբերմամբ նախկին քաղաքականութիւնը և բորբոքում են ազգամիջեան կռիւներ։

Պէտք է, որ նոր պատերազմում հայերը կը մնան բոլորովին մեկուսացված և պէտք է յոյսը դնեն բացառապէս իրանց ուժերի վրա։

Բայց թէ այդ ուժերը անբաւարար են և պատրաստ չեն հանդէս գալու, դա մեզանից աւելի լաւ յայտնի է իրանց հայերին։

Ժամանակ է աւելի զգաստօրէն նայելու իր ժողովրդի բաղդի վրա և չենթարկելու նրան նոր աննպատակ փորձանքների, որոնք կանխաւ դատապարտված են կործանման։

Ժամանակ է ըմբռնել, որ պատերազմական քաղաքականութիւնը դէպի բարիք չի տանի և չէ կարելի պատերազմ մղել ամենքի դէմ։

Այդպիսի քաղաքականութիւնը հասցրեց հայերին սարսափելի նեղանցքի, նա կործանեց Թիւրքական Հայաստանը և կարող է այժմ բոլորովին կործանել և Անդրկովկասեան հայերի ապագան։

Ստեղծված [illegible] դրութիւնից միակ ելքը այս է.

Անհրաժեշտ է արմատականապէս փոխել ընդհանուր քաղաքականութեան ընթացքը և փոխել նրան խաղաղութեան, բարեկամութեան և համերաշխութեան քաղաքականութեան՝ ամենից առաջ իրանց մօտ դրացիների հետ։

Ծանր է այս ամենը կարդալ, բայց հարկաւոր է ունենալ քաջութիւն՝ առողջութեամբ լսել դառն ճշմարտութիւնը։

Թողնելով միւս անգամին մանրամասն [illegible] մասին, առ այժմ այսքանը պէտք է ասենք, որ հայերը բնաւ որևէ ազդեցիկ նպատակ կամ քաղաքականութիւն չունեն, այլ նրանց միակ նպատակը՝ ինքնապաշտպանութիւնն է։

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ „ՄՇԱԿԻ" բաժանորդների

«Մշակի» 1918 թ. № 1-ը (յունվարի 3-ի) կուղարկվի ԹԻՖԼԻՍԻ բաժանորդներից նրանց էլ, որոնք չեն վերանորոգել իրանց բաժանորդագրութիւնը։ Իսկ № 2-ից սկսած թերթը կուղարկվի նրանց միայն, ովքեր բաժանորդագրված կը լինեն 1918 թ. համար։

Թիֆլիսից դուրսը գտնվող գաւառական բոլոր բաժանորդներին, որոնք դեռ ես չեն վերանորոգել իրանց բաժանորդագրութիւնը, թերթի առաքումը կը դադարեցվի յունվարի 1 ից։

«ՄՇԱԿԻ» գրասենեակ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներգաղթը դէպի Խնուսի շրջանը օրից օր աճում է ոչ միայն Անդրկովկասի կողմից, այլև Թիւրքահայաստանի դեռ ևս չը նուաճված վայրերից։ Այս վերջինիս առաջին կայանը համարվում է Հարամիկ գիւղը, որ Խնուսի բերդից 12 վերստ հեռաւորութեան վրա է գտնվում։ Այստեղ են ապաստանում գաղթականները, ուր մի առժամանակ անցկացնելով Քաղաքային Միութեան հիմնած սննդատու կայարանում ցրվում են շրջակայ գիւղերը։ Ցանկանալով մօտից տեղեկանալ այս ներգաղթի ընթացքի և պատճառների հետ, շրջանի կոմիսար պ. Գ. Նիկոլեանը այս օրերս այցելեց այս գիւղը և մանրամասն վիճակագրութիւն կազմել տուեց վերջին անգամ եկած գաղթականների մասին. Նրանք դեռ ևս մնում են այս գիւղում։ Ահա այս վիճակագրութիւնից ցանկանում ենք որոշ քաղուածքներ անել։

Աշնան սկզբից հետզհետէ փոքր և մեծ խմբերով եկել են Հարամիկ 300 ից աւելի հայ գաղթականներ գլխաւորապէս Սասունի շրջանից, որոնց մի մասը դեռ ևս մնում է այս գիւղում, մի մասն էլ ցրվել Խնուս, Մանազկերտ և շրջակայքը։ Վերջին անգամ եկել են նոյեմբերի 27-ին, ընդամենը 145, որոնցից 18 հոգին արդէն տեղափոխվել են Արոս (6 հոգի), Զաւուրմա (3 հոգի) և Մանազկերտ (9 հոգի)։ Մնացած 125 հոգին դեռ ևս մնում են Հարամիկ գիւղում անմխիթար դրութեան մէջ։ Պէտք է ասել, որ այս գիւղն էլ աւերված է, սրա 300 տուն բնակիչներից մնացել են միայն 8 տուն։ Տները աւերված են, դուռ, պատուհան, կտուր, մի խօսքով բոլոր փայտեղէնը քանդված, վառված է։ Այս աւեր տների կտուրները մի կերպ ծածկելով, ապաստանել են գաղթականները։ Դռներն ու պատուհանները բոլորովին բաց են և քամին ու ձիւնը բաւական չեն համարում նեղքերի կրած նեղութիւնները։ Այս գաղթականները գլխաւորապէս Սասունի Մոտկանի շրջանից են՝ Ծիրառ, Կուսդեղ 6-ական ընտանիք, Ծրատուկ, Ծման, Գեղխօ, Հազօ 4-ական ընտ., Մամլա, Սեւլուդ, Նորաշէն 2-ական և Մալաֆան, Կոխ, Հերսոր, Առաքէլ, Ճեզօ, Կորվար, Օլոռ, Արառով բէկ, Մըշկեր, Մծրա, Արտու, Դերջոջ, Չմռան մէկ մէկ ընտանիք։ Սրանք գաղտնաբար հեռ. 20-ին համախմբվել են Ճգնէ գիւղի մօտ և ցերեկը թաքնվել, գիշերը ճանապարհ են կտրել։ Մի քիւրդ և մի հայ առաջնորդել են նրանց. 7 օր կիսաքաղց ճանապարհ են եկել. Ֆիշերմայ ցրտին միայն մի երեխայ սառել, մեռել է, միւսները անվտանգ, սակայն բաւական մաշված ու տանջված հասել են Հարամիկ նոյեմ. 27-ին։

Մոտկանի բոլոր գիւղերը [illegible] են, հիմնովին աւերված են, և բոլոր բնակիչները կոտորվել են կամ փախել, մնում են խառն բնակչութիւն ունեցող գիւղերը, ուր քիւրդերը չը մտածելով «աղն ու հացը» ապաստան են տալ մի քանի տասնեակ հայերի։

Այս բոլոր փախստականները յոգնած են, ֆիզիքական լաւ կազմուածք ունեն և ազատ որևէ ախտաւորութիւնից։ Մշտապէս չափազանց սոսոր են գտնվում. սրանց մէջ ոչ մի գրագէտ չը կայ, նոյն իսկ քահանան անգրագէտ է, անգիր է սովորել ժամասացութիւնը։ Ընտանիքի մաքրութիւնը իր բարձրութեան վրա է կանգնած։ Պատմում էին, որ ճանապարհին երիտասարդներից մինը մի հարսի «աչքով է արել», ամուսինը դաշոյնի երեք հարուածով մի այնպիսի դաս է տուել, որ սրա եղբայրը ստիպված է եղել վերցնելու նրան և հետ տանելու։ Բոլորն առանց բացառութեան խօսում են քիւրդերէն, ինչպէս և հայերէն՝ Սասունի աւելի կոպիտ բարբառով. միայն Ճգնէ գիւղացիք չը գիտեն հայերէն։ Բոլորն էլ լուսաւորչական են, սակայն մոլեռանդ։ Այս 47 ընտանիքը բաղկացած է 125 հոգուց (63 ար. և 62 իգ.)։ Ընտանիքի դրութիւնը հետևեալն է. ամուսնացածներ՝ 22, այրիներ՝ 39 և չամուսնացածներ՝ 64։ Իւրաքանչիւր գերդաստան բաղկացած է 2,7 հոգուց, մինչդեռ, ինչպէս կերևի հետևեալ թւերից, եղել է 11. կան նոյն իսկ գերդաստաններ, որոնց 30 անդամներից մնացել է միայն մի անձ, ինչպէս օր. Ճեզօ գիւղից Հայրապետ Դերսոնը։

Ըստ հասակի սրանք դասաւորվում են հետևեալ կերպ.

1—7	տարեկան	13	արական	9	իգական
8—13	»	14	»	18	»
14—18	»	16	»	8	»
19—60	»	20	»	27	»

Իսկ 61-ից աւելի ոչ մի հոգի։

Պարզ է ուրեմն՝ որ ծերունիները չեն կարողացել դիմանալ այս նեղութիւններին և կամ չեն խիզախել փախչելու։ Տղամարդկանց թիւը երիտասարդական հասակում մեծ է, իսկ չափահասում՝ փոքր. կանանց թիւը, ընդհակառակը, երիտասարդականում՝ փոքր, իսկ չափահասում՝ մեծ. պարզ է, որ կամ տարել են կամ կոտորել։

Այս 47 ընտանիքը պատերազմից առաջ բաղկացած է եղել 518 անձից, ուրեմն իւրաքանչիւր ընտանիքը 11 հոգուց։ Սրանցից 156 սպանվել են, 109 մեռել գլխաւորապէս քաղցից, 33 դաղազան ժամանակ փախել են Անդրկովկաս, 96 մնացել հայրենիքում, իսկ 125 նոր եկել են Հարամիկ։

Փախստականների ասելով՝ իրանց տնտեսական դրութիւնը նախ քան պատերազմը վատ չէ եղել, պարապել են երկրագործութեամբ և անասնապահութեամբ. իւրաքանչիւր ընտանիք մօտաւորապէս ունեցել է 40 պուտ ցորեն, 1—2 եզ, 2—3 կով, 40—300 այծ և ոչխար։

Ուշագրաւ է, որ սրանց հետ փախել եկել են և երկու քիւրդ երիտասարդներ, որոնք իրանց այս վարմունքը բացատրում են նրանով, որ զինվոր պիտի լինէին։ Թէ հայ և թէ քիւրդ փախստականները պատմում են, թէ հիմի ժամանակ թիւրք կառավարութիւնը բռնութեամբ գրաւեց քիւրդի 4/5 մասը. [illegible] և խաղանցի քիւրդ աշիրէթները չեն կամեցել ենթարկվել, և կառավարութիւնը ռմբակոծել է նրանց գիւղերը։ Այս պատճառով էլ այդ կողմերում սաստիկ սով է տիրում։ Պատմում են, որ Ցեխերդին բէկը, նա որ առաջ բնակվում էր Խնուսի Թապու գիւղում և պատերազմի ընթացքում կոտորել էր Հարքեփիրու, Գոմարաու, Դումանու, Բուրնազ, Շաքադին, Ալզամլիք, Խաղ և Մարաֆ գիւղերի հայերին, այս կողմերին ռուսները տիրապետելիս փախել գնացել էր Սևերեկ գիւղաքաղաքը, սակայն այս աշնան սկզբին սովից ստիպված՝ իր 400 զինակիցներով կամեցել է վերադառնալ. սակայն Խաչակէշ լերան մօտ Մուսաբէկը յարձակվել է սրա վրա և կոտորել, խլանալով Ռուսաստան տեղափոխվելու մտադրութիւնը։ Ցեխերդին-բէկը այնու ամենայնիւ ազատվել է միայն 28 հոգով, փախել եկել է և բնակութիւն հաստատել Բրնգեօլի տարածքում. Նրա օրինակին հետևում են և միւս փախած քիւրդերը, որոնք հետզհետէ վերադառնում են և բռնում գլխաւորապէս Սուլխաշէն լեռների լանջերը։

Երբ քիւրդերն անգամ այդ դժոխային հանգամանքներում չեն կարողանում մնալ և փախչում են դէպի մեզ, որքան աւելի դժոխար պիտի լինի հայերին, որոնց ոչ միայն սովը, այլ և թիւրքի, քիւրդի սուրն ու թալանն է սպառնում ամեն օր։ Եւ չարագործների ճիրաններից ազատվածները, որոնց եթէ մի կտոր չոր հաց հասցնելու չը լինենք, աւելի դառն վիճակի պէտք է ենթարկենք. հետևապէս ով չէ ցանկանում ազատված Հայաստանը առանց հայերի թողնի, թող կատարէ իր ամենասուրբ պարտքը՝ տալով հաց խեղճ փախստականներին։

Երուանդունի

„ՄՇԱԿԻ"
ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պատճէնը «Պայքարին», «Республика»-ին և «Кавк. Сл.»-ին)

Աղեքսանդրապոլ 29 դեկտ.

Անկուսակցական սօցիալիստների կազմակերպութիւնը գտնում է, որ առանձին ազգային կորպուսների կազմումը չէ կարող աջողութեամբ պաշտպանել կովկասեան միացեալ ֆրոնտը և լի է ազգամիջեան բարդութիւններով։ Թիւրքիում Կովկասի բոլոր ազգութիւնները հաւասար սկզբունքներով պարտաւոր են պաշտպանել թէ պետական սահմանները և թէ ֆրոնտը ընդհանուր ուժերով, որովհետև նրանք ամենը մի երկրի զաւակներ են և նրանց եղբայրութիւնը սաստիկ դաշտի վրա [illegible] է [illegible] բազմալեզու ազգաբնակութեան միութեան, թէ [illegible] մէջ և թէ ռուս մեծ ժողովրդի մէջ։ Ազգային գնդերը և բատալիոնները պէտք է մտնեն ընդհանուր կորպուսի մէջ այն հաշւով, որ ամեն մի կորպուսում լինեն բոլոր ազգութիւնների մասերը, զօդված ռուսական տարրով։ Մենք հակառակ ենք նեղ կուսակցական ազգայնական քաղաքականութեան, ուստի և անհրաժեշտ ենք համարում մասնակցութիւնը Անդրկովկասեան Կոմիսարիատի մէջ այն տարրերի, որոնք նպաստէին խորապէս ազգերի բարի դրացիական յարաբերութիւնների ամրապնդման, որոնք պատմականապէս և քաղաքականապէս շաղկապված են իրար հետ և կարող էին հաստատել հաստատուն կարգ և երաշխաւորել քաղաքացիների ամենատարրական իրաւունքները պատուի, գոյքի և կեանքի ապահովութեան համար։

Լեւոն Սարգսեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

ՆՈՐԱԳՈՅՆ ԼՈՒՐԵՐ

✖ Պետական արժեթղթեր պատրաստող էքսպեդիցիայի մէջ տպվում է [illegible] չելու ռուսական հանրապետութեան բոլոր քաղաքացիներին, սկսած 18 տարեկանից մինչև 50-ը։ Դեկրետ կազմվում է այն բնաւորութեան հետ, որ ստացել են բանակցութիւնները հաշտութեան մասին։

✖ Դաշնակիցները բոլորովին էլ չեն հրաժարվում ձեռնարկել հաշտութեան բանակցութիւնների կենտրօնական պետութիւնների հետ, բայց բոլորովին ոչ այն հիմունքներով, որ առաջարկվեցին Պետրօգրադում։ Գերմանական կառավարութիւնն աշխատում է գտնել յենակէտ այդ տեսակ բանակցութիւնների համար և որոնում է միջնորդների։ Համաձայնութեան դէպքում Գերմանիան կը կանգնէ դաշնակիցների տեսակէտի վրա, որոնք յայտնել են, թէ Ռուսաստանի հետ բանակցութիւնները նրանք կը ճանաչեն, երբ Ռուսաստանում սահմանվի երկրի վստահութիւնը վայելող կառավարութիւն։ Այդ դէպքում Գերմանիան կը խզէ իր յարաբերութիւնները մեծամասնականների հետ։

✖ Չեն ճշդվում այն լուրերը, թէ խզվել են բանակցութիւնները Գերմանիայի հետ և մեծամասնականներ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ԱՆԵՆՔ

Ինչ էլ որ լինեն պատճառները, ով էլ որ լինեն մեղաւորները, սակայն իրողութիւնն այն է, որ կովկասեան ռազմաբեմի ճակատը անպաշտպան և բաց է թշնամու առաջ, մեզ սպառնում է նրա կողմից վտանգ։—Ի՞նչ պէտք է անենք մենք։

Պէտք է վտանգի առաջն առնենք, և նախ և առաջ պաշտպանենք մեր երկիրը, մեր ընտանիքը, մեր կեանքը։ Պէտք է մեր վրա վերցնենք այն պարտականութիւնը, որ ռուս պետութիւնը պիտի կատարէր, բայց ձեռնհաս չեղաւ մինչև վերջը կատարելու։

Ինքնապաշտպանութիւն—սա պարտականութիւն չէ միայն, այլ անբռնաբարելի իրաւունք է ամեն մի արարածի, ամեն մի [illegible]

Կովկասում, հանգամանքների բերմամբ, մենք ամենից աւելի ենք վտանգված, ուրեմն և ամենամեծ իրաւունքն ու պարտականութիւնն ունենք ինքնապաշտպանութեան։

Բայց կարող ենք մենք այդպիսի մեծ և հետևանքներով լի քայլ անել, մի բուռը ժողովուրդ դուրս գալ՝ մի մեծ պետութեան զինւորական ուժի առաջը կանգնելու, մեր ուժերը կը բաւե՞ն։

Երբ մեր լինել թէ չը լինելու խնդիրն է դրված, այսպիսի հարցը անտեղի է։ Ջուրն ընկածը մի րոպէ անգամ չէ մտածում, թէ ուժ ունի՞ ջրի հոսանքի դէմ մաքառելու. նա մաքառում է մինչև վերջին շունչը, որովհետև չմաքառելն ինքնին անխուսափելի մահ է, իսկ մաքառելը միակ միջոցը փրկութեան։

Պէտք է սակայն սառնասիրտ լինենք, գիտենք վտանգն իր ամբողջութեամբ, ո՛չ մեծացնենք նրան ու յուսահատվենք, ո՛չ նուազեցնենք նրան ու անհոգ լինենք։

Թշնամու կողմից վտանգը սաստկանում է նրանով, որ մեր թիկունքը խաղաղ չէ. մութ ուժերը, կուսակցական կռիւները, պրովոկացիան կարող են նորանոր բարդութիւններ առաջացնել։ Դրութիւնը ծանրանում է նրանով, որ զինւորումը, պարենաւորումը և կազմակերպչական գործը բաւարար վիճակի մէջ չեն։

Բայց կան մի շարք նպաստաւոր հանգամանքներ, որոնք յոյս են ներշնչում, թէ [illegible] կը պսակվի։

Ամենից առաջ՝ բարենպաստ հանգամանքն այն է, որ ինքնապաշտպանութիւնը անհրաժեշտ են համարում Կովկասում գործող բոլոր ազդեցիկ կազմակերպութիւնները ու մարմինները, ոչ միայն չորս խոշոր ազգերի ազգային խորհուրդներն են ճանաչել այս անհրաժեշտութիւնը, այլ և Կովկասեան Կոմիսարիատը, այլ և բոլշեւիկները։

Ուրեմն ինքնապաշտպանութիւն կազմակերպելու հարցում բոլորը միաբան են, ոչ մի տարաձայնութիւն չը կայ։ Ինքնապաշտպանութիւնը այս դէպքում կը դառնայ ոչ թէ մի սեպարատ քայլ մեր կողմից, ոչ թէ մի նեղ ազգային շարժում, այլ Կովկասեան կառավարութեան՝ պետական գործ, որի մէջ մենք էլ վերցնելու ենք մեր վրա մասնակցութեան մեր բաժինը։

Պարենաւորումը, զինաւորումը և այլն, դառնում են տեղական կառավարութեան պարտականութիւնը, և սրանով մեր բեռը կը թեթևանայ։

Դարձեալ՝ մենք հայերս մենակ չենք լինելու կովկասեան ճակատի պաշտպանութեան գործում։ Նոյն նպատակի համար կազմակերպում են կորպուսներ ու դիվիզիաներ վրացիք, թուրքերը, ռուսները, յոյները, ասորիները, եզիդները, լեհերը։ Արտաքին վտանգն սպառնում է ընդհանուր Կովկասին, և կովկասաբնակ ժողովուրդները, առանց ցեղի ու կրօնի խտրութեան, պաշտ- [illegible] րը, կեանքն ու անկախութիւնը։

Մի ուրիշ բարենպաստ հանգամանք՝ մեր թշնամու դժուար կացութիւնն է. նա ոչ միայն թուլացած է ու քայքայված, բայց և ազատ չէ իր ռազմագիտական ձեռնարկութիւնների մէջ։ Անգլիական բանակները Սիրիայի և Բաղդադի ճակատներից խոր մուտք են գործել նրա երկրի մէջ, և որևէ յախուռն շարժում դէպի Կովկաս՝ կարող է օրհասական դառնալ նրա համար, եթէ անգլիացիք Մուսուլը գրաւեն ու նրա թիկունքը դուրս գան։

Բայց ամենամեծ առաւելութիւնը, որ մենք ունենք, դա գործի բարոյական կողմն է։ Հայրենիքը, ընտանիքը պաշտպանելու սուրբ զգացումը, գիտակցութիւնը՝ թէ մեծ պատմական հարց է լուծվում մեզ համար, ազգային և անհատական պարտականութեան ըմբռնումը, որ ստեղծվում է ամենուրեք—սրանք այն բարոյական ազդակներն են, որ ոգևորում են մեզ և խիստ բարձրացնում մեր ինքնապաշտպանութեան ուժը։ Այսպիսի բարոյական ազդակներ չունեն թշնամիները։ Մինչդեռ մեզանում ուսուցիչ, աշակերտ, բժիշկ, ծառայող, սոսկ քաղաքացիներ ինքնաբերաբար վճիռներ են կայացնում իրանց ֆիզիքական, նիւթական և բարոյական ուժերը նուիրելու հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին, թշնամու բանակն, ընդհակառակ, քայքայվում է։ Փախչում են ովքեր կարող են։ Ոգևորութիւնը մեր մէջ հերոսներ ու նահատակներ է ստեղծում. նրանք չունեն ոգևորութեան աղբիւր։

Այս բարոյական առաւելութիւնը առհասարակ նշանակութիւն ունի ներկայ ժամանակում։ Յայտնի է զինւորական գիտութեան մէջ, որ զօրքի ուժի մի քառորդը կազմում է նրա նիւթական ուժը (քանակութիւնը, զինաւորումը և այլն), իսկ երեք քառորդը նրա բարոյական ուժը—ոգևորութիւնը, գիտակցութիւնը։

Հաշւելով ռուսահայերի թիւը մօտ երկու միլիօն և հիմնվելով հասակների վիճակագրական տուեալների վրա գտնում ենք, որ միայն ռուսահայերը կարող են հանդէս բերել զէնք կրելու ընդունակ (19—45 տարեկան) 370,000 մարդ, որից եթէ 70,000 դուրս ձգենք իբրև ֆիզիքապէս անկարող կամ այլ պատճառներով զինւորագրութեան ոչ ենթակայ՝ կը մնայ մի պատկառելի քանակութիւն, 300,000 մարդ, բազմապատկված ոգևորութեամբ, որ բաւական է թէ ճակատի և թէ թիկունքի պաշտպանութեան համար։ Սրա վրա պէտք է աւելացնել Թիւրքահայերի կամաւորական դիվիզիան, որ, նոյնպիսի հաշիւներով, կարող է տալ մօտ 30,000 զինւոր։ Չեմ խօսում մեր կովկասեան հարևանների զինւորական ուժի մասին։

Ես խորապէս համոզված եմ, որ մենք ունենք բաւականաչափ ուժ՝ հայրենիքի պաշտպանութեան և ինքնապաշտպանութեան գործը պատւով և յաջողութեամբ [illegible] զգաստութիւն առանց յոխորտանքի, առանց ագրեսիվ լոզունգների և անձնախնդրութեան, առանց սնափառութեան տենչանքների, առանց կուսակցական փառախնդրութեան և տիրապետական ձգտումների, այլ միաբան ու համերաշխ, մի ընդհանուր և սուրբ գաղափարով տոգորված, ձեռք ձեռքի տուած աշխատենք, աշխատենք լարված ուժերով, լուռ ու մունջ։

Մեր 2600 տարվայ պատմութիւնը մեր սերունդին է նայում։

Ստ. Մալխասեանց

(Վերջ)

ՃԻՒՂԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Ինչպէս հեռագրում են Նոր Նախիջևանից, Հայ Ժող. Կուսակցութեան տեղական ճիւղի նախաձեռնութեամբ գումարվել, բազմամարդ հրապարակական ժողով, Սուոնիկեանի նախագահութեամբ, որ որոշել է բողոքել հայոց վանքապատկան և եկեղեցական հողերի գրաւման դէմ։ Բողոքի այս որոշումը հաղորդված է Ազգային Խորհրդին։

—

Լրագիրներին հաղորդված է, որ Ախալքալաքի գաւառի հայերը, որոնք կազմում են ազգաբնակութեան 75 տոկոսը, սաստիկ վշտացած են, որ Ախալքալաքի գաւառում չէ մտցվում զեմստվօ Հայ Ժող. Կուսակցութեան տեղական ճիւղի կոմիտէտը վճռականապէս պահանջում է զեմստվօ մտցնել նաև Ախալքալաքի գաւառում։

ՈՒՂՂԵԼԻՔ

Երէկվայ համարում (№ 275), երրորդ սիւնակում, 19-դ տողում տպագրված է. «Տաւար ամբոխ»։ Պէտք է լինի «Խաւար ամբոխ»։

Հ. Ժ. Կ. Խմբ. Յանձնաժողով

յայտարարել են սրբազան պատերազմ։ Գերմանացիք պահանջում են, որպէսզի հաշտութեան բանակցութիւնները շարունակվեն Բրեստում, հրաժարվելով փոխադրել բանակցութիւնները չէզոք պետութեան շրջանը։

✖ Վիկժէլի տեղեկութիւնների համաձայն, Վորոնէժի մօտ սպասվում է մեծ կռիւ։ Կենտրոնանում են Կալէդինի և ուկրայնցիների խոշոր ուժեր։ Խարկովի մօտ կռիւ է, օգնութեան համար ուղարկված են ուկրայնական զօրքեր։ Խարկով և Լօզօվայա կայարանների մէջ Սէվաստոպօլի ուղղութեամբ ռէլսերը հանված են։

✖ Դաշնակից դեսպանները պահանջել են Տրօցկիից յանձնել իրանց պատկանեալ 5 միլիօնը, որոնք պահվում են պետական բանկում։ Տրօցկին մերժեց։

✖ Մեծամասնականների կառավարութիւնը բանակցութիւններ սկսել է պարսից դեսպանի հետ ռուս զօրքերին Պարսկաստանից դուրս հանելու մասին։ Տրօցկին մշակել է ռուս զօրքերին հանելու ընդհանուր պլան, նաև կառաջարկէ Թիւրքիային պարսից կառավարութեան միջոցով՝ համաձայնել թիւրք զօրքերին հանելու պլանը ռուս զօրքերին հանելու պլանի հետ։ Մտադրութիւն կայ իսկոյն հանել այն զօրամասերին՝ որոնք նշանակութիւն չունեն զինւորական տեսակէտից և ծառայում են միայն նուաճումների համար։ Պարսկաստան կուղարկվեն էմիսարներ՝ պարզելու համար ռուսական նոր միջազգային քաղաքականութիւնը։

✖ Պարզվում է, որ մեծամասնականները մտադիր չեն գումարել նոյնիսկ յունվարի 5-ին Հիմնադիր Ժողովը։ Սմոլնիում հրովարտակով նրանք յայտնելու են, թէ Հ. Ժ. չէ արտայայտում ժողովրդի կամքը, որի փոխարէն յունվ. 8-ին կը գումարվի բանւորների համագումար։ Այս վերջինը կը յայտարարի իրան ազգային կօնվենտ և սանկցիա կը տայ հաշտութեանը, նաև կորոշէ Ռուսաստանի կառավարութեան ձևի նախագիծը։

Ուրիշ տեղեկութիւնների համաձայն, յունվ. 5-ին մեծամասնականները կը գումարեն Հ. Ժ., որին կառաջարկեն ճանաչել խորհրդի իշխանութիւնը, բայց որովհետև Հիմն. Ժողովում մեծամասնականները քիչ կը լինեն, նրանք և ձախակողմեան էսէրները կը հեռանան կը մեկնեն Սմօլնի՝ բանւորների համագումարին մասնակցելու համար։

✖ Հիւսիսային զօրաճակատում զօրքերն արձակվում են։ Սիմֆէրօպոլ գունդը մնացել է բաղդի քմահաճոյքին. դաշտային և ծանր թնդանօթները թողնված են և խրված են ձիւնի մէջ։ Ձիերը բաժանվել են ազգաբնակութեան մէջ։

ԷՐԶՐՈՒՄՈՒՄ

Կովկասեան բանակի հրամանատարը հեռագրում է Կովկասեան ճակատի գլխաւոր հրամանատար Պրժեվալսկուն.

«Նկատելով որ Էրզրումի թիւրք ազգաբնակութիւնը խիստ անհանգիստ է ռուս զօրքերի հեռացումով և հայ կամաւորական գնդերի կազմակերպութեամբ, ես դեկտ. 23-ին, իմ նախագահութեամբ գումարեցի խորհրդակցութիւն թիւրք և հայ ազգաբնակութեան ներկայացուցիչներից։ Մտքերի փոխանակութիւնից յետոյ պարզվեց, որ երկու ազգի ներկայացուցիչներն էլ համերաշխ են և ձգտում են բարեկամական եղբայրական յարաբերութեան։ Յոյս ունեմ, որ հայ և թիւրք ներկայացուցիչների հաւաստիացումները հաստատ հիմք կը ծառայեն նրանց բարեկամական կամաւորական յարաբերութիւններին»։ Օդիշելիձէ

24 դեկտ. 1917 Թ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Որքան և մինչև այժմ Հայոց Ազգային Խորհուրդը չը կարողացաւ կազմակերպել տեղեկատու մաս մամուլի համար, որի օրգանները կամ պատահաբար կամ կողմնակի միջոցներով կարողանում են տեղեկութիւններ ստանալ նրա գործունէութեան մասին (մինչ աւելի նպատակայարմար էր կազմակերպել որոշ սխեմով), բայց և այնպէս մենք ևս կողմնակի կերպով կարող ենք հաղորդել մի քանի տեղեկութիւններ։

Ազգային Խորհուրդը որոշել է աշխատանքի բաժանումն կատարել իր անդամների մէջ կամ ստեղծել զանազան թղթապանակներ։ Ամեն մի ճիւղ պէտք է ունենայ մի վարիչ։ Օրինակ, արտաքին գործերի վարիչը լինելու է Ալ. Ահարոնեան, զինւորական գործերի վարիչ Ստ. Մամիկոնեան (?), ֆինանսական գործերի վարիչ Սեր. Ֆրիլխանդանեան (?), ներքին գործերի՝ Տ. Բէգզադեան, պարենաւորման և փախստականական գործերի՝ Ս. Յարութիւնեան, երկրագործութեան՝ Լ. Աթաբէգեան, արդարադատութեան՝ օֆիցէր Տէր Օհանեան կամ Մ. Պապաջանեան։ Վերջինս ընտրվել է նաև փոխ-նախագահ ազգամիջեան զինւորական խորհրդի, որի նախագահն է Նոյ Ռամիշվիլի։

Ազգային Խորհուրդը, նկատողութեան առնելով որ մի քանի տեղերում ձգտումն է երևում անջատօրէն քայլեր և գործողութիւններ կատարել, որոշեց յայտարարել, թէ ընդհանուր քաղաքականութեան վերաբերեալ գործերը վերապահված են իրան՝ Խորհրդին։ Այսպէս օրինակ Ալէքսանդրապօլում կազմված մի կոմիտէ, նախագահութեամբ Ալ. Խատիսեանի, հեռագրով յայտնել է, որ եթէ մինչև ամսիս 30-ը Ազգային Խորհուրդը ընդհանուր զօրահաւաք չը հրատարակէ, ինքն ստիպված կը լինի այդ անել։ Այսպիսի անջատ քայլեր չը պէտք է անել, այլպէս Ազգային Խորհրդի հեղինակութիւնը կը նսեմանայ։

—

Գ. Չալխուշեան յայտնում է Ռոստովից, որ Նոր-Նախիջևանի հայ ժողովուրդը պատրաստ է դրամական օգնութիւն ցոյց տալ Ազգային Խորհրդին, բայց մարդկային ուժեր, այսինքն զինւորներ տալ չէ կարող, որովհետև կան բազմաթիւ դասալիքներ և բօլշևիկներ հայերի մէջ։ Ոգևորութիւն չէ նկատվում նոյն իսկ Թիւրքահայերի և պարսկահայերի մէջ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Իրաւաբան Բարխուդարեանի նախագահութեամբ կայացաւ Թիֆլիսի հայ իրաւաբանների բազմամարդ ժողով, որը զբաղվեց ներկայ ժամանակին վերաբերող [illegible] Ժողովը միաձայն որոշեց. «Թիֆլիսի հայ իրաւաբանները ընդառաջ գնալով Հայոց Ազգային Խորհրդի կոչին և իրանց սրբազան պարտականութիւնը համարելով անմիջապէս ենթարկվել նրա կարգադրութիւններին՝ յայտնում են իրանց պատրաստակամութիւնը բոլոր ուժերով ծառայել հայրենի ժողովրդի գործին, որը կառաջարկէ Ազգային Խորհուրդը և ժամանակաւոր ներկայացուցչական մարմինը՝ ընտրված այս ժողովից»։ Նոյն ժողովում ընտրվել է ներկայացուցչական մարմին, որի մէջ մտնում են. Բարխուդարեան, Ա. Պապովեան, Գ. Խատիսեան, Ռ. Յովհաննիսեան, Յ. Ամիրխանեան, Գ. Ուզբաշեան և Ս. Կուսիկեան։

※ Զակօմին հեռագրում են Գանձակից, որ այնտեղ կազմվել է հանրային [illegible] կոմիտէ, որն արդէն ընտրել է իր պրեզիդիումը։ Պրեզիդիումի նախագահն է Խասմամեդօվ, օգնականները Գուսմեյ և Խ. Համասիևա, քարտուղարներ՝ Օսաբովսկի և Մուստաֆաեւ։ Համաձայն Զակօմի կարգադրութեան, այդ կոմիտէն իր ձեռքն է առել նահանգի գերագոյն իշխանութիւնը։ Քաղաքացիական միլիցիա կազմակերպելու համար կոմիտէն Զակօմից խնդրում է 1 միլիօն րուբլի։ Միլիցիայի թիւը հասնելու է 1200 ի։ Միլիցիան գործելու է ռազմիկ օֆիցէրների հրամանատարութեան տակ։

◆ Հիւս. Կովկասից հեռագրում են Զակօմին, որ Գուդերմեսում [illegible] կռիւը վերսկսվել է։ Շրջանում ահ ու սարսափ է տիրում։

※ Գանձակի նահ. պարենաւորման կոմիտէի նախագահ Ուսուբբեկով հեռագրում է Զակօմին, որ անցնող էշելոնները աւերելով պարենաւորման պահեստները Գանձակ կայարանում, կողոպտած է վեց վագոն ալիւր, 1 վ. շաքար։ Եւլախ կայարանի պահեստից տարել են 7 վագոն շաքար և 8 վ. ալիւր։ Մնացած մթերքները պահեստների շէնքերի հետ մոխիր են դարձել։ Հեռագրի վերջում [illegible] խնդրվում է Գանձակ ուղարկել Թիֆլիսի համար Փօթիի վրայով առաքվող ալիւրն ու շաքարը։

◆ Կարսի շրջանային կոմիսարը դեկտ. 29-ից հեռագրում է Զակօմին, որ դեկտ. 28-ի գիշերը Սարըղամըշում կողոպտվեց դաշտային գանձի գրասենեակը։ Տարան 2½ միլիոնից աւելի գումար։ Կարսի շրջանային քննիչը քննութիւն է կատարում։ Կասկածով ձերբակալվեց գանձապետ Տօմլաձէ։ Նկատվում է, որ առ հասարակ անփոյթ վերաբերմունք է եղել դէպի դրամի պահպանման գործը։ Նոյն կոմիսարը միաժամանակ հեռագրում է, որ աւտոմօբիլային երթևեկութիւնը շրջանում կատարվելու է հետևեալ գծերով. Կարս-Կաղզւան, Կարս-Արդահան, Կարս-Օլթի։ Ճանապարհների տեղական վարչութիւնը խոստացել է կարգի բերել այդ ճամբաները։ Պոստի երթևեկութիւնը կանգ է առել։ Դրութիւնը կրիտիքական է։ Խնդրում են աւտոմօբիլ։

◆ Դեկտ. 29-ից, Ախալցխայի Ազգ. Խորհ. նախագահ [illegible] հեռագրում է, որ մուսուլմանների ներկայացուցիչների կարգինալ պահանջն է՝ թոյլ տալ, որ իրանց մտնեն 116 դ պահեստի զօրամասի շարքերը(?)։

◆ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչը Գանձակից, ինժ. Կօզովից ստացաւ հետևեալ հեռագիրը. «Կայարանը գիշերները չի լուսաւորվում։ Գնացքները երթևեկում են առանց կոնդուկտորների և ազդանշանների։ Գիշերային երթևեկութիւնը առաջ է բերում նոր-նոր պատահարներ՝ յարձակումներ և այլն։ Իրերի այսպիսի դրութեամբ ես ընդհատում եմ գիշերային երթևեկութիւնը Գանձակից մինչև Լեակի կայարանը։ Սպասում եմ ձեր կարգադրութեան»։

※ Չորեքշաբթի, դեկտ. 27-ին, Մանթաշեանի անուան առևտրական դպրոցում, նախագահութեամբ Շիրվանզադէի, կայացաւ Հայ Արուեստագէտների Միութեան արտակարգ ընդհ. ժողով։ Ի նկատի առնելով ազգային ներկայ դժուարին կացութիւնը, ժողովը միաձայն որոշեց՝ ա) Հայոց Ազգային Խորհրդի տրամադրութեան տակ դնել Միութեան անդամների բոլոր ֆիզիքական և բարոյական ուժերը. բ) Իբրև նիւթական աջակցութիւն ազգային գործին Միութեան բոլոր արւեստագէտ անդամներից հաւաքել նկարներ և պատկերներ և աճուրդ նշանակելով ամբողջ մուտքը յանձնել Ազգային Խորհրդին։ Պատկերների հաւաքումը և աճուրդի գործը կազմակերպելու համար ընտրվեց մի յանձնաժողով, որի մէջ մտան, Դ. Չոլեան, Մ. Սարեան, Գ. Լեոնեան, Ե. Թաջատրեան, Գ. Շարբաբչեան և Ե. Դաքայեան։

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ԱԽԱԼՔԱԼԱՔԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ

Ալէքս. Խատիսեանը հեռագրում է Զակօմին, 29 դեկտեմբերից.

Այս րոպէին Ախալքալաքից հաղորդում են ինձ, որ թուրքերը շրջապատել են Ախալքալաքը. հեռագրաթելերը, բացի մէկից, կտրված են։ Բօգդանովկա գիւղում վեց թուրք, որ կամենում էին թելերը կտրել, սպանվեցին բոլորն էլ։ Ախալքալաքից օգնութիւն են խնդրում հէնց այժմ. ինչ հնար է կուղարկենք, թէև մեզ մօտ էլ ուժեր չը կան։ Երզրումը օգնութիւն է խնդրում։ Ուղարկեցէք Գորի-Բորժոմի վրայով։

Խատիսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հայոց Դեմոկրատիկական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովի նախագահ Հ. Առաքելեանին

Նոյեմբերի 18-ին կայացած Հայոց Դեմոկրատիկական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովի շարունակութեան մէջ, ձեր նախագահութեամբ կատարվել է մի ապօրինութիւն, որի համար հրապարակապէս բողոքելով պահանջում ենք անմիջապէս ուղղել այդ սխալը, հրաւիրելով նոր ընդհանուր ժողով և կայացնելով օրինաւոր ընտրութիւն։

Հարցը նրանումն է, որ առաջին ժողովում որոշ ընտրելիներ գ. գ. Լ. Քալանթարը և Գ. Լևոնեանը չեն ընտրվում, բայց նոյն ժողովի շարունակութեան մէջ, ուր ներկայ էին աւելի քիչ անդամներ, քան սկզբնական ժողովում, շատերի բացակայութեամբ, հակառակ արդարադատութեան, նոյն մարդկանց անունները նորից դրվում են քուէարկութեան և այս անգամ անց կացվում։

Զարմանալի է, որ ընտրելիներն ևս համաձայնվում են քուէարկվել։

Հայոց Դեմ. Ընկ. անդամ՝
Մ. Բ. Լազարեանց

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ

Ժող. կոմիսարների խորհուրդը որոշեց Հիմնադիր Ժողովը բանալ յունվարի 5-ին, երբ ներկայ կը լինեն 400 պատգամաւոր։ Այդ պատճառով առաջարկում եմ բոլոր ընտրական կոմիտէներին, որ ընտրութեան հետևանքների մասին դեռ չեն յայտնել, շտապով յայտնեն այդ մասին վկայականներ տալ թեկնածուներին և այն մասին տեղեկացնել ժող. կոմիսարների խորհրդին։ Բոլոր պատգամաւորները հրաւիրվում են ցուցակագրվելու Տաւրիկեան պալատում մինչև յունվարի 5-ը, իսկ այդ տեղերում, ուր ընտրութեան հաշիւը դեռ չէ վերջացել, անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռք առնել ընտրութիւնների հետևանքները որոշելու այն հաշւով, որ պատգամաւորները կարողանան Պետրոգրադ գալ յունվարի 5-ին։

Ընտրութիւնների կոմիսար՝ Ուրիցկի

ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲԱՆԿԵՐԸ ԳՐԱՒՎԱԾ

Դեկտ. 14-ին հեռագրում են.

Այսօր առաւօտեան, Սմօլնիի կարգադրութեամբ Պետրոգրադի բոլոր մասնաւոր առևտրական բանկերը գրաւվեցին զօրամասերով, որոնց գլուխ նշանակված են կոմիսարներ։

Նշանակելով պահակախմբեր, կոմիսարները առաջարկեցին ներկայ եղողներին չը ցրվել և լսել ժողովրդական կոմիսարների խորհրդի հրովարտակը, թէ մասնաւոր բանկերը շարունակում են անսաստել նոր իշխանութիւնը, չը ներկայացնելով իրանց գրքերը պետական բանկի վերահսկողութեան համար և թաքցնում են սկզբում կուտակված ապեկուլացիան, ուստի և պատուիրված է յանձնել բանկերը պետական բանկի կոմիսարի տնօրինութեանը։

Կոմիսարը ներկայացրեց բանկերը գրաւելու հրամանը, ստորագրված զինւորական գործերի կոմիսարի ձեռքով։

Կոմիսարները առաջարկեցին բանկերի կառավարիչներին տալ բանալիները և ուղարկել գրքերը պետական բանկ. բոլոր կառավարիչները, որոնք մերժեցին կատարել այդ պահանջը, կալանաւորվեցին, և բանկերի աշխատանքը կանգ առաւ։

Միաժամանակ կալանաւորվեցին բանկերի ներկայացուցիչները։ Հրամայված է կալանաւորել Ազով-Դոնեան, Ռուսսա-արդիւնաբերական, Վոլգա-Կամա բանկերի տնօրէններին, Ռուսական արտաքին գործերի բանկի վարչութեան նախագահին և մի շարք ուրիշ բանկերի նախագահներին, որոնց թւում Դանիլովին, Տիմիրեազեվին, Պուտիլովին և այլն։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ

II

Պետրոգրադ, 10 դեկտ.

Իմ նամակներում մի քանի անգամ նկատելի է, որ ռուս ազգը հնազանդում է բռնութեան և լռում ու հնազանդվում է բռնի ուժին։ Այո, անուրանալի ճշմարտութիւն է։ Սակայն միւս կողմից չէ կարելի չը հերքել այն միութեան և համերաշխութեան վրա, որ ներկայումս տիրում է սրանց մէջ։ Այս կողմից կարելի է ասել որ Պետրօգրադը իր միակամ քաղաքով Մոսկվայից էլ անցել է։ Ժողովրդի տրամադրութիւնը և ոգևորութիւնը շատ բարձր է։ Առանց բացառութեան բոլոր հիմնարկութիւնները բօլշեվիկներին բօյկոտ են հրատարակել, ամեն դժուարութեան, զրկանքի դիմանում և բօյկոտը շարունակում են։ Բաւական է որ բօլշևիկները մի որևէ հիմնարկութեան կամ գործի մէջ մատ խառնեն, անմիջապէս ամենավերջին ծառայողից մինչև գլխաւոր կառավարիչը գլխարկները վերցնում և հեռանում են. ոչ մի խոստում, ոչ մի սպառնալիք չէ օգնում։

Թէև բօլշևիկներն էլ իրանց կողմից ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում, և, ինչպէս ռուսական առածն ասում է «пьяному морѣ по колѣно», սրանք էլ նախ իրանց անակնկալ աջողութիւնից արբած և առաջ ներկայ տարտամ և անորոշ դրութիւնից շփոթված և գլուխները կորցրած, ինչ որ խելքներին փչում է՝ առանց երկար ու բարակ մտածելու հրահանգում են, իրականացնում են, աւելի յարմար է ասել՝ «սպիտակ թղթի վրա սև տառերով տպում», անունը «դեկրետ» կամ «պրիկազ» դնում և ցրում են ժողովրդի մէջ։ Զօրքին և կարմիր գվարդիային առանձնաշնորհութեան աստիճանի հասած ազատութիւն, անքննելի գործունէութիւն, փող, նուէր, խրախճանք և «արդիւնաւոր» պաշտօններ, խոստումներ և այլն և այլն տալով օրէ-օր պահում են մինչև իրանց համար մի ելք գտնեն, իսկ այս վերջիններս (զօրքը և կարմիր գվարդիան) զգալով իրանց ույժն և նշանակութիւնը, համոզված լինելով որ այսպէս շարունակվել երկար չէ կարող, լայն չափով օգտվում են իրանց արտօնութիւններից. իսկ Լենին, Տրօցկի և ընկերութիւնը ստիպված է լռել։ Այս բազդախնդիրները, որ Ռուսաստանը դէպի կործան են մղում, որ ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում դաշնակիցների և Ռուսաստանի ժողովրդի բոլոր դիմումներին և բողոքին, որ իրանց միակ և անվիճելի տէրն են համարում այս երկրի, այժմ այս մարդիկը խաղալիք են դարձել զօրքի և կարմիր գվարդիայի համար և սրանց առաջ բոլորովին անզօր են։

Թէև սրանց՝ բօլշևիկների բազմաթիւ արարքների, կարգադրութիւնների և դեկրետների ետևից ոչ մի գրիչ կամ թղթակից չէ կարող հասնել, բայց և այնպէս կաշխատեմ՝ որքան կարելի է՝ նկարագրել և Պետրօգրադի անցքերը և մի ընդհանուր գաղափար տալ «Մշակի» ընթերցողներին։

Հիմն. Ժողովի դէմ սարքած խարդաւանքների մասին արդէն առանձին թղթակցութեամբ գրել եմ. դրութիւնը նոյնն է. Տաւրիկեան պալատի դռները պատգամաւորների առաջ փակված և զինուորներով շրջապատված են։

Կոմիսար Ուրիցկին նոյն պալատում, առաւօտեան ժամը 11-ից մինչև ուշ երեկոյ նստած իր պաշտօնական սենեակում, սպասում է Պետրօգրադ եկած պատգամաւորների ներկայանալուն, որպէսզի իր «պաշտօնական» տետրակում ցուցակագրէ և հաստատութեան տայ, սակայն մինչև օրս նրան ներկայացել են միայն 44 պատգամաւոր (ի հարկէ բօլշևիկ)։ Միւս կուսակցութիւնների պատգամաւորները քաղաքում շարունակ ժողովներ և խորհրդակցութիւններ ունեն։ Հարկաւ «Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է, որ «ժամանակաւոր կառավարութեան» և ուկրայինցիների միջով սև կատու է անցել, այդ պատճառով էլ ուկրայինցիք վճռել են առ այժմ իրանց պատգամաւորներին չուղարկել Պետրօգրադ։

Ի դէպ, 4 օր առաջ դեմօկրատիկ և ազգերի ազատութիւնն ու ինքնավարութիւնը պաշտպանող (Հայաստանը Թիւրքիային տուող) կառավարութեան կոմիսարները մի խիստ ուլտիմատում ներկայացրին ուկրայինցիներին՝ տալով 48 ժամ ժամանակ մտածելու և պատասխանելու, այսպէս ասած «հնազանդվելու». սակայն երբ ուկրայինցիները չը սպասելով նոյնիսկ 48 ժամին, անմիջապէս իրանց կողմից աւելի խիստ ուլտիմատում կոխեցին սրանց կոկորդը, որոնք այս մեծ և իրանց քմքին անհամ պատառը ոչ կուլ տալ իմացան և ոչ դուրս նետել, միւս կողմից հակայեղափոխական Կալեդինը «իր համախոհ» կազակներով սկսեց ջարդել և փախուստի մատնել յեղափոխական անյաղթ կարմիր գվարդիային և զօրքին, և վերջապէս երբ Պետրօգրադի և Մոսկվայի բօլշևիկներին նուիրված նրանց մի հրամանով անզէն ժողովրդին կոտորող, Հիմնադիր Ժողովը ցրող գարնիզոնները բացարձակապէս մերժեցին գնալ ուկրայինցիներին ճնշելու, գերադասելով մայրաքաղաքների անզէն ժողովրդին, մագազինները, հիւրանոցները, կլուբները և գինու ու սպիրտի ամբարները թալանելը և այլն և այլն, այս բոլորը ի նկատի ունենալով ընկեր Լենինը սկսեց իր պոչը այս ու այն կողմը շարժել՝ միջնորդ փնտռել, որպէսզի իր արժանապատուութիւնը և ուլտիմատումի էֆեկտը չը կորցնի և գործը խաղաղութեամբ վերջացնի, սակայն տարաբաղդաբար ոչ ոք չուզեց միջնորդել և «տօվարիշչ պրեզիդենտ»ին ազատել այս փափուկ դրութիւնից, այն ժամանակ «совѣтъ комиссаровъ рѣшилъ не обострять конфликта съ Радой и послать делегацію» (դեկտ. 8 ից իրանց օրգան „Правда“)։ Ուկրայինցիների հետ յարաբերութիւնը օրէ-օր լարվում է. դաշնակիցները թէև ոչ պաշտօնական, սակայն ուղարկել են նրանց մօտ իրանց ներկայացուցիչները. ամբողջ Ռուսաստանի և բոլոր ճիւղերի համակրանքը վայելում են, շուտով իրանց սեփական թղթադրամը պիտի տպեն։ Սակայն այս մասին միւս անգամ։ Անցնենք օրվայ լուրերին։

Լուրեր են պտտում, որ Լենինը վճռել է շատ շուտով Հիմնադիր Ժողովի պաշտօնապէս բացվելու և նիստերը սկսելու հրամանը տալ։ Որքան ճշմարիտ է՝ յայտնի չէ. կապրենք և կը տեսնենք. ամենայն դէպս քում Հիմնադիր Ժողովի մասին առ այժմ ոչ մի նոր բան գրելու չունեմ. դրութիւնը նոյնն է, որպէս նախորդ թղթակցութիւնումս նկարագրել եմ։

Արդէն յայտնի է, որ սրանց գլուխ գործոցը, այն գործը, որով կարողացան հրապուրել և որով յաղթեցին զինուորին, գիւղացուն, ամբոխին և մութիկ գիւղացուն, «հաշտութիւն, հաց և հող» լօզունգն էր. այժմ նայենք թէ ինչպէս խաղացին իրանց ստեղծած կատակերգութիւնները։ Հաց, փառք Աստուծոյ, այժմ բոլորովին չը կայ. հող թէև որքան ուզես՝ կայ (երբ առաջ չը կար), միայն որովհետև այժմ ընկեր կոմիսարները աւելի լուրջ և անյետաձգելի հարցերով և խնդիրներով են զբաղված, իսկ բուրժուա կալուածատէրերն էլ իրանց քէֆով իրանց սեփական հողի կալուածաթղթերը և պլանները չեն տալիս տօվարիշչ Լենինին, որ նա «արդարութեամբ» և «դեմօկրատիկ» օրէնքներով բաժանէ գիւղացիների մէջ, ուստի մի դեկրետով խնդրվեց գիւղացիներից առ այժմ Լենինին հանգիստ թողնել, «ինշալլահ» շուտով ամբողջ Ռուսաստանին տիրապետելուց, Հիմնադիր Ժողովը մի անգամ ընդ միշտ ոչնչացնելուց, հակայեղափոխական «բուրժույներին» ջարդելուց և Ռուսաստանի «այրի» գահը բազմելուց յետոյ՝ ի հարկէ արդէն ինքը գիտէ ինչ անելը և ընկեր գիւղացու շահը ինչպէս պաշտպանելը, իսկ մինչ այդ, յեղափոխական Ռուսաստանի տօվարիշչ գիւղացին, Լենինի քարոզած և պաշտպանած դեմօկրատիկ օրէնքներով, հանդերձ կեանքի և գոյքի անձեռնմխելիութեամբ, ազատ է կալուածատէրերի հետ վարվելու ընկերաբար, այսինքն սրանց տները կրակ տալով, ապրանքը, հարստութիւնը թալանելով, անասունները կտրելով, կալուածատէրերին գետնը նետելով և «մասամբ նորին»։

Մնում է ամենագլխաւորը՝ հաշտութիւնը, որը, համաձայն իրանց խոստման, այն է «առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի, ազգերի ինքնավարութեամբ» արդէն աջողեցրին, թէև մի փոքրիկ բացառութեամբ, այսինքն խոստացել էին ընդհանուր և վերջնական հաշտութիւն, բայց դէ ջհանդամը դաշնակիցներին տանէ, որ չը մասնակցեցին այսպիսի գնահատելի գաղափարին։ Թէև չար լեզուները ասում են, որ Լենինը խոստացել էր Գերմանիայի դեմօկրատների և պրօլետարիատի հետ մշակել և ստորագրել հաշտութիւնը, մինչդեռ բոլորովին ընդհակառակը եղաւ, այսինքն դեմօկրատիկ Ռուսաստանի ներկայացուցիչների առաջ Վիլհելմը հանեց իր դիպլոմատներին և զօրապետներին. նոյնպէս ասում են որ հաշտութեան պայմանները այնքան ամօթալի և վնասակար էին Ռուսաստանի համար, որ գեներալ Սկալօնը չը կարողանալով դիմանալ մի այսպիսի սար աւետաբեր՝ ինքնասպանութիւն գործեց. Նոյն չար լեզուները պնդում են, որ գերմանական շտաբը, Լենինի հետ արդէն Գերմանիայում կապած պայմանի համաձայն, ռուսի գլխի տակը փափուկ բարձ դրեց, բանակը վերջնականապէս կազմալուծեց, որպէս զի ընդհանուր ույժով ջախջախէ Ֆրանսիային և Իտալիային, ապա վերադառնայ ռուսի վրա և իր հաշիւը վերջնականապէս և ընդմիշտ փակէ և այլն և այլն։ Սակայն այս բոլորը անամօթ «սպլետնիկների» և բուրժույ կադետների տարածած լուրեր են. միթէ ընկեր Լենին կը դաւաճանէ ռուսին, քաւ լիցի. եթէ նա ասում է մածունը սև է, պիտի հաւատալ։

Գաղտնի դոկումենտները արխիւներից հանող և ընդհանուր աշխարհին յայտարարող Լենինի առևտրական տունը արդեօք ինչ պայմաններով է կնքել այս կիսատ պռատ և կասկածելի հաշտութիւնը. արդեօք յաղթական Գերմանիայի թելադրած պայմանները նոյն մին են, որ մեզ՝ հասարակ մահկանացուներիս յայտնել են, թէ, ինչպէս Պարսկաստանում ընդունված է նման դէպքերում ասել, «դեօշակի տակում էլի բան կայ». ահա այս մասին է որ անհրաժեշտ եմ համարում մի քանի լուսաբանութիւններ տալ «Մշակի» ընթերցողներին։

Գաբրիէլ Շահրազեան

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ.

Հայ Արուեստագէտների Միութիւնը, իր դեկտ. 27 ի արտակարգ ընդհանուր ժողովում, ի նկատի ունենալով ազգային ներկայ դժուարին կացութիւնը, ի թիւս այլ որոշումների ընտրեց նաև մի յանձնաժողով և պարտք դրեց այդ յանձնաժողովի վրա հայ արուեստագէտների նուիրաբերած գործերից շատ շուտով կազմակերպել մի ցուցահանդէս աճուրդ և ամբողջ հասոյթը յանձնել Հայոց Ազգային Խորհրդին։

Յանձնաժողովս այս կոչով դիմում է Թիֆլիսում գտնվող բոլոր արուեստագէտներին մասնակցել այս գործին, նուիրաբերելով պատկերներ, նկարներ, և այլ գեղարուեստական իրեր։ Նոյնը խնդրվում է Միութեան օժանդակիչ անդամներից և մասնաւոր անձերից եթէ ունեն նուիրաբերելի այդ տեսակի գործեր։

Պատկերների և այլ տեսակի գործերի ընդունելութիւնը յանձնաժողովիս անդամ պ. Ս. Խաչատուրեանի բնակարանում, յունվարի 1-ից մինչև 7-ը, օրվայ ժամը 11-ից մինչև 4 ը. Հասցէն՝ նկարիչ Խաչատուրեան, առ Մելիք-Ազարեանի, Օլգինսկայա փողոց, մուտքը Չերքեզի վերելքից, բնակարան № 19. պատկերների ուր ցուցադրվելու և աճուրդի օրը կայանալու մասին կը յայտարարվի առանձին։

Ծանօթ. — Նուիրաբերված պատկերները եթէ առանց շրջանակի լինեն, շրջանակ պատրաստելը յանձն կառնի Միութիւնը։ Պատկերներ նուիրաբերողներին դիւրութիւն տալու համար յանձնաժողովի կողմից մարդ կուղարկվի երբ յայտնեն նրան այդ մասին։

1530 1—1 Յանձնաժողով

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Թուլիոն, Վորոնցովի արձանի հանդէպ)
Բաց է
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606» ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ՑԵՐԵԿՆԵՐԸ
Բ. Ա. ՆԻՍՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ։
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—10 կէսից—12 կէս ժ. Ներքին ջղային և երեխայոց հիւանդութիւն և ծաղկահատ։
Մ. Գ. ՍԻՆԵՍԻՍԵԱՆ—11 կէսից—1 կէս ժ. մորթ ու հ. վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւ.
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ 12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ա. ԽՍԱՀԱԿԵԱՆ—6—7 ժ. կանանց ն. և վեներական.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդակցութեան (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՖԵԼԴՇԵՐ ԲԺՇԿ.
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Մասնագէտ վեներական, ջղային և սեռական թուլութեան հիւանդութիւնների։ Եկւոր հիւանդներին ցոյց եմ տալիս յայտնի մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին ուղարկում եմ գրաւոր խորհուրդներ և ռեցեպտներ (առաջուց ղրկել 5 րուբլի)։ Հիւանդների ընդունելութիւնը նախօրօք գրվելու պայմանով։ 5—7 ժամը։ Հասցէ՝ Тифлисъ Семеновская ул. 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаяну վերին յարկ։
Ծախվում են ինձ մօտ իմ կազմած
1) «Փորձանքների առձեռն բժշկարան» այժմ 50 կ.
2) «Տրիպէր և բժշկութիւնը, ռեցեպտ.» այժմ 40 կ.
3) «Կնիկարմատի շալվարը» ծիծաղ. վօդեվիլ 20 կ.
4) «Րաֆֆիի համառօտ կենսագր.» 10 կ.
Գրքերի գինը և ճանապարհածախսը 20 կ. առաջուց ուղարկել։
Նամակով փող կամ մարկա չը ղրկել։
(հ. կ.) 374. 100—67

ՑԱԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ-

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Երիտասարդ գրողների գրադարան № 1.
ՄԻՔ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
ԵՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
Հատոր II
Շքեղ հրատարակութիւն—հեղինակի պատկերով։ Գինը 3 ր.։ Ճանապարհածախսով 3 ր. 50 կ.։ Դիմել՝ Тифлисъ. Книгоиздательство «Патани», М. Эприкянъ, Ходживанкская, 5.
(Կ) 1426 8—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ԲԺԻՇԿ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ
հետեւեալ աշխատութիւնները.
1) Անդրադարձ (возвратный) տիֆ 20 կ.
2) Բծաւոր (сыпной) և որովայնի (брюшной) տիֆ 30 կ.
3) Волосы—(մազերի հիւանդութ.) 10 կ.
4) Բազմածնութիւն. արուեստական ամլութիւն և հակաբեղմնաւորական միջոցներ 25 կ.
5) Սիֆիլ. և Հաթա-էրլիխեան «606» 15 կ.
Գրքեր ստանալու համար նախօրօք ուղարկել գրքերի գինը և 25 կ. ճանապարհածախս։ Հասարակ նամակով դրամ կամ մարկա չուղարկել։
Պահեստ՝ Тифлисъ, Вознесенская ул. № 8. кв. Д-ра В. А. Хачатрянца.
(ա. օ.) 1460. 40—10

Типографія „АККУРАТНО“
Тифлисъ, Авлабаръ, Шемахинская ул. № 9.
Принимаетъ всевозможныя работы, а именно: брошюры, книги, объявленія, афиши, программы, счета, визитныя и адресныя карточки, пригласительные и свадебные билеты, свидѣтельства и похвальные листы, блокноты, ярлыки, этикеты и т. п.
(Ն. 2) 1512 10—1

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
Թիֆլիսի Առաջին Առևտրական Դպրոցում
Պարապմունքը կը սկսվի յունվարի 15-ից։ Ցանկացողներից, հաշուապահութիւնը անցնել հայերէն լեզուով, կը կազմվի առանձին խումբ։ Խնդիրները ընդունվում են ուսումնարանի գրասենեակում՝ առաւօտ. ժամը 10-ից մինչև 12-ը։
1529 10—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ն. Ո. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թւից)
Երկու սեռի անձանց համար
Դասընթացքը 4 ամսեայ ամենօրեայ պարապմունքներով,
Խնդիրների ընդունելութիւնը առաջին սեմեստրի համար վերսկսվում է դեկտեմբերի 15 ից։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից 1918 թ.։ Ծրագիր և կանոնները տրվում են կուրսերի գրասենեակը՝ Թիֆլիս, Նիկօլայեվսկայա փողոց, № 22, հեռախօս № 7—44։
Կուրսերին կից դասընթացներ փետրվարի 1-ից բացվելու են
ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ Հաշուապահական կուրսեր
3 ամսեայ դասընթացքով։ Ցանկացողների թիւը սահմանափակ է։
(Ե. Ն. Կ.) 1463. 0—8



ՕԳՏՎԵՑԷՔ ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹԻՑ
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ
ՀԻՊՆՕՏԻԶՄԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
Գործնական հոգեբանութեան
ԿՈՒՐՍԵՐԸ
Այս նոր կուրսերը մասնաւորապէս պատրաստված են այն նպատակով, որ ընթերցողը կարողանայ սովորել Հիպնօտիզմը առանց ուսուցչի, առանց մեծ ծախքերի և առանց միջնորդի սոսկ մտքի ույժով։
Ընթերցողը Հիպնօտիզմին տիրապետելուց յետոյ՝ կարող է բուժել զանազան տեսակ հիւանդութիւններ, որոնք նշանակված են 32-րդ դասում։
Հիպնօտիզմով կարելի է վերացնել վատ [illegible] թիւն, ծուլութիւն, ծխել, մի խօսքով արմատախիլ անել՝ ինչ որ վատ է, ու ներշնչել՝ ինչ որ լաւ է և օգտակար։
Հիպնօտիզմով դուք կարող էք ուղարկել ձեր ենթակային հեռու վայրեր, ուր գտնվում են ձեր սիրելիները և բարեկամները, որ նրանցից տեղեկութիւն բերի ձեզ։
Հիպնօտիզմով դուք կարող էք՝ բացի գաղտնիքների մէջ թափանցելուց՝ տալ և աշխուցիչ և ծիծաղ առաջ բերող սէանսներ (տեսարաններ)։ Հիպնօտիզմով դուք կարող էք իմանալ ով է վերցրել ձեր իրերը, կամ ուր էք կորցրել կամ թագցրած իրերի տեղը։
Արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետևեալ հասցէով. СУСАННА ШЕКЕРЖЯНЪ, Вельяминовская ул. № 22, Тифлисъ.
Խնդրվում է բաց նամակներին փակցնել 5 կոպ. մարկա, իսկ, փակ նամակներին 15 կոպ. մարկա։
(Կ.) 916 40—19

Առևտրի և Արդիւնաբեր. Մինիստրութեան հսկողութեան ներքոյ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24 հեռախօս № 9—76.)
Խնդիրների ընդունելութիւնը դեկտեմբերի 25-ից։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15 ից։ Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են 30 կոպէկով, կուրսերի գրասենեակից։
(օ. մ.) 1450 0—10

Полноправная Гимназія
Пріемъ во всѣ классы: Съ азбучнаго до 5 кл. включительно

БУХГАЛТЕРСКІЕ КУРСЫ
Занятія съ 10 янв. по группамъ и въ одиночку съ 3 до 5 ч. дня, 7 до 9 ч. веч.
Завѣд. Ив. Зах. Теръ-Степановъ. I Тумановская ул. с. д. № 13.
(28, 30, 1, 6) 1509 5—4

ԱՆՀՐԱԺԵՇՏ է ամենքին ունենալ
ՏՈԿՈՍՆԵՐԻ ԱՂԻՒՍԱԿ
Բոլոր դրամագլուխների՝ ամեն տեսակ տոկոսով, 1—366 օրվայ։ Գինը 2 ր. 50 կ.։ Միխայլովսկի պր., 24. Փիլոյեանի դասընթացքներ, երեկ. ժամը 4—6 ը։
(օ. մ.) 1451 10—10

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
„ԲԱՐԻ ԼՈՒՐ“
ԿՐՕՆԱԿԱՆ ԹԵՐԹԻ
1918
XIII ՏԱՐԻ
«ԲԱՐԻ ԼՈՒՐԻ» տարեկան գինը 10 րուբլի է։
Հասցէ. Баку. Редакція журнала „БАРИ ЛУРЪ“, Колюбакинская № 2. Արտասահմանից Rédaction «Bari Lur», Baku.
(Կ) 1492 10—2

Типографія «ЭКОНОМІЯ» Тифлисъ